

## Ներդրումային ծրագիր-առաջարկ

### «Նորարարական առանց թափոնների ագրոարդյունաբերական համալիր»

#### *Մեղմագիր*

«Չեխական արտահանման բանկ»-ի, «Բաուեր Տեքնիքս» չեխական կազմակերպության, «Միներալ բիո օրգանիկա հիդրոպոնիկա» մեքսիկական նորարարական կազմակերպության հետ առկա բազմակողմանի պայմանագրերի հիման վրա “Ագրո-Միթի” ՍՊԸ-ն առաջարկում է Հայաստանի Հանրապետությունում 20 հա ընդհանուր մակերեսով նորարարական, առանց թափոնների ջերմոցային-ֆերմերային համալիր տնտեսություն կառուցելու ներդրումային նախագիծ:

Պետք է նշել, որ ՀՀ-ում նորարարությունների աջակցման դրամաշնորհային տարբեր ծրագրերի շրջանակներում գյուղատնտեսության ոլորտում նորագույն տեխնոլոգիաների կիրառման ուղղություններով իրականացվել են փոքրամասշտաբ և առանձին նպատակային նախագծեր ջերմոցային տնտեսությունների կամ անասնապահական ֆերմաների, բիոգազի արտադրության կազմակերպման ուղղություններով: Սակայն այդ ծրագրերն առանձին նեղ նպատակային բնույթ են կրել, ինչպես կիրառվող նոր տեխնոլոգիաների, այնպես էլ արտադրվող ապրանքների առումներով և իրականացվել են որպես փոքր հզորություններով արտադրություններ ի տարբերություն “Ագրո-Միթի” ՍՊԸ կողմից առաջարկվող «Նորարարական առանց թափոնների ագրոարդյունաբերական համալիր» նախագծի, որը, փաստորեն իրենից ներկայացնում է գյուղատնտեսական ոլորտի տարբեր ճյուղերում մի քանի նոր տեխնոլոգիաների և գործընթացների կիրառմամբ փոխկապակցված ու փոխլրացնող գյուղատնտեսական միջճյուղային մասնագիտացված համակցված արտադրություն՝ դրա կազմակերպման համար ռեսուրսային պահանջների ճկուն, արդյունավետ կարգավորմամբ ու ղեկավարմամբ: Կարևոր հանգամանք է հանդիսանում նաև սույն նախագծի իրականացման արդյունքում բնակչության առողջության համար մեծ նշանակություն ունեցող համեմատաբար ցածր գներով էկոլոգիապես մաքուր և բարձրակարգ որակի արտադրանքի ներկայությունը շուկայում, որի նկատմամբ պահանջարկը ներկայումս խիստ աճում է առողջ ապրելակերպի արդի մարտահրավերներին և օրգանական գյուղատնտեսական մթերքների սպառման ծավալների օրըստօրե մեծացման միտումի հրամայականին համապատասխան:

Ջերմոցային-ֆերմերային նորարարական համալիր տնտեսության արտադրանքի գերակշիռ մասը արտահանվելու է ՌԴ և Չեխիայի Հանրապետություն, ինչպես նաև իրացվելու է ներքին շուկայում: Իրացման շուկաների ուղղությամբ արդեն իսկ առկա են նախնական պայմանավորվածություններ:

## Առաջարկի նկարագրությունը

Նորարարական տեխնոլոգիաների հիման վրա ագրոարդյունաբերական համալիր տնտեսության կազմակերպում, որի առանձնահատկությունը և նորամուծությունը գործունեության հաջորդական շղթայական ապահովման մոտեցման կիրառումն է: Այս մոտեցման էությունը կայանում է նրանում, որ ջերմոցային և անասնապահական ու անասնաբուժական տնտեսությունների 2 առանձին խոշոր բլոկներն ապահովում են միմյանց գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսները և ստեղծում առանց թափոնների արտադրություն:

Նշված բլոկներից մեկը՝ անասնապահական և անասնաբուժական ֆերման մասնագիտացվում է ինչպես «վոլոգյան», «գալշոնյան» և «շվեյցարական սիմենտալ» ցեղատեսակների բուծմամբ, որոնք կներկրվեն Չեխիայի Հանրապետությունից, այնպես էլ մսի, կաթի և կաթնամթերքի, մասնավորապես՝ պանրի արտադրմամբ: Ֆերման ամբողջովին հագեցած է այդ գործունեության համար անհրաժեշտ բոլոր առանձին աշխատանքային տարածքներով, բարձր տեխնոլոգիական սարքավորումներով, տեխնիկայով, գոմաղբի հեռացման և ինչպես այստեղ, այնպես էլ ջերմոցային տնտեսությունում կենսաապահովման բոլոր գործընթացների ճկուն ավտոմատ կառավարման համակարգերով, այդ թվում՝ հեռահար ռեժիմում:

Որպես կառուցվածքային և տեխնոլոգիական նորարարություն հարկ է նշել, որ կովանոցն ու հորթանոցը երկհարկանի են: Երկրորդ հարկում առանց կապի պահվում են կենդանիները, իսկ առաջին հարկում տեղակայված են գոմաղբի հեռացման ենթակառուցվածքները, որոնք հավաքված գոմաղբը մղում են դեպի բիոգազի և ՋԷԿ-ի արտադրամասեր:

ՀՀ և նույնիսկ կովկասյան տարածաշրջանի համար որպես նորարարություն առանցքային նշանակություն ունի համալիրում անասունների օրգանիզմի բնական կենսագործունեության արգասիքի /գոմաղբի/ հիման վրա բիոգազի սեփական արտադրության կազմակերպումը, որն առաջին հերթին լուծում է անասնապահական ֆերմայի թափոնների օգտահանության հարցը, երկրորդ հերթին՝ դրա օգտագործմամբ աշխատող ՋԷԿ-ը ապահովում է համալիրի գործունեության համար անհրաժեշտ էլեկտաէներգիայի և ջերմության ծավալները, իսկ բիոգազի արտադրության թափոնների վերամշակումից ստացված օրգանական պարարտանյութը ծառայում է ջերմոցային տնտեսության կարիքներին: Առանձնահատուկ պետք է նշել սեփական անասնախոտի աճեցումը, որի ծավալը կազմում է անասնապահական ֆերմային անհրաժեշտ անասնակերի քանակի 1/3-ը, ինչն էլ, իր հերթին, նպաստում է անասնակերի ձեռք բերման ծախսերի 50%-ով նվազեցմանը. պահանջվող անասնակերի մնացած 2/3-ը արտադրվում է անմիջապես ֆերմերային տնտեսությունում:

Համալիրի երկրորդ բլոկը նորարարական տեխնոլոգիաներով գործարկվող ջերմոցային տնտեսությունն է, որտեղ նախատեսվում է կազմակերպել անասնախոտի, լոլիկի և կանկարի արտադրություններ: Ի տարբերություն ՀՀ տարածքում ջերմոցային տնտեսություններում գյուղատնտեսական կուլտուրաների մշակման հիմնականում ավանդական մեթոդների՝ այստեղ կիրառվելու է հիդրոպոնիկայի մեթոդը, որի դեպքում բույսերի աճեցումն իրականացվում է առանց հողի, արհեստական լցանյութերի վրա՝ բույսերի նորմալ աճի և զարգացման համար անհրաժեշտ սննդարար լուծույթի պահանջվող քանակություններով և ճշգրիտ չափաբաժիններով պարբերաբար մատակարարման եղանակով, որի ապահովումը համարյա թե անհնարին է հողային աճեցման պայմաններում: Այս մեթոդը ի հաշիվ իր առանձնահատկությունների հանդիսանում է ռեսուրսախնայող տեխնոլոգիա, որն ապահովում է դրա կիրառմամբ աճեցվող էկոլոգիապես մաքուր, լավ որակի գյուղատնտեսական կուլտուրաների առավել բարձր բերքատվություն ցածր ինքնարժեքի պայմաններում: Աճեցվող կուլտուրաների փոշոտումը նախատեսվում է իրականացնել բնական եղանակով՝ ջերմոցում պահվող մեղվաբնտանիքների միջոցով:

## **Ֆինանսական պայմաններ. Համագործակցություն**

### *Ներդրման գումարը*

- Համաֆինանսավորման պահանջվող գումարը՝ 2.000.000 եվրո՝ կապիտալ շինարարություն իրականացնելու նպատակով
- Այլ ներդրողներ՝

«Բաուեր Տեքնիքս» ԲԸ ("BAUER TECHNICS a.s"). Չեխիայի Հանրապետության կառավարության «Արտահանողների աջակցման ծրագրի» շրջանակներում «Չեխական ներդրումային բանկ»-ի կողմից վարկավորման ձևով, 5% տարեկան տոկոսադրույքով և 8 տարի ժամկետով, որից առաջին 2 տարվա համար նախագիծը իրականացնող կազմակերպությանը տրամադրվում է մայր գումարի և տոկոսների վճարման արձակուրդ:

- 9.817.000 եվրո - Ամբողջական շինարարական ծառայությունների փաթեթ (под ключ)
- 5.000.000 եվրո - Հիմնական և շրջանառու միջոցներ, տարբեր ծառայություններ

### **«Ագրոսիթի» ՍՊԸ**

3.000.000 եվրո - Նախագծի հեղինակի կողմից նշված գումարի արժողությամբ հիմնական միջոցների և ծառայությունների ներդրում, որը չի ներառվելու նախագծի ֆինանսական նախահաշվի մեջ.

1. Հող
2. Օժանդակ շենքեր և շինություններ
3. Գազաֆիկացում, էլեկտրաֆիկացում, ջրամատակարարման համակարգ
4. ՋԷԿ-ի կառուցում և զինում
5. Ճարտարագիտական և գեոդեզիական ծառայություններ:

### **Կարևոր է**

*Առևտրային պայմանագրի արժեքի 95% -ը՝ որպես առավելագույն սահման կհատուցվի Չեխական Հանրապետության կառավարության «Արտահանման երաշխիքային և ապահովագրական չեխական պետական ընկերության» կողմից ապահովագրության միջոցով չեխական արտահանման նախագծերի աջակցություն պետական ծրագրի շրջանակներում:*

Համաձայն նախագիծն իրականացնող կողմերի միջև կնքված պայմանագրի՝ ջերմոցային-ֆերմերային համալիր տնտեսությունը կառուցելու համար նախատեսված ողջ հիմնական միջոցները պետք է ձեռք բերվեն և ներկրվեն Չեխիայի Հանրապետությունից: Ամբողջական շինարարական ծառայությունների փաթեթի /ποδ κλεισ/ ապահովման համար պահանջվող տեխնիկատնտեսական անձնակազմը նույնպես ներկայացնելու են չեխ մասնագետները:

Նախագծի իրականացման համար պահանջվող համաֆինանսավորման ծավալը կազմում է նախագծի ընդհանուր գումարի 15%, որի ներդրման դեպքում Նախագիծը իրականացնող կադմակերպությունը պատրաստակամ է համաֆինանսավորողին 15% փայաբաժին կամ բաժնեմաս:

### **Ձեռնարկության նախագծային հզորություն՝**

20,0 հա - Համալիրի ընդհանուր մակերես՝

որից՝

14 հա - Ագրոարտադրական համալիր

1 հա - Բիոգազի, օրգանական պարարտանյութի և խտացրած ու համակցված անասնակերի արտադրություն

5 հա - Վարչական և օժանդակ շենքեր ու շինություններ

Ագրոարտադրական համալիր, ներառյալ՝

4,6 հա - **Ջերմոցային տնտեսություն**, որից՝

2 հա - Լոլիկի արտադրություն. տարեկան՝ 2 բերք  
(1հա՝ 600-700տ բերքատվություն)

2հա - Կանկարի արտադրություն. տարեկան՝ 2 բերք  
(1հա՝ 400տ բերքատվություն)

0,6հա - Անասնախոտի արտադրություն (1000 մ<sup>2</sup>՝ 9-10տ խոտ օրական)

Մեղվանոց - 80 հատ փեթակ (փոշոտում ապահովելու համար)

Անասնապահական և անասնաբուժական ֆերմա

Նախատեսված է 600 գլուխ կաթնատու կովի համար, որոնցից արհեստական սերմնավորման միջոցով ստացվում է 600 գլուխ հորթ 50:50 հարաբերակցությամբ /էգ:ործ/: Ֆերմայում նախատեսված է՝ կովանոց, հորթանոց, սպանդանոց, կթման սրահ, կաթի և կաթնամթերքի արտադրամաս, սառնարանային տնտեսություն:

Կաթի և կաթնամթերքի արտադրություն

1 տարվա կտրվածքով

5.100.000 լիտր - Կաթի արտադրություն

/1կովից՝ 8.5000 լիտր կաթ/

510.000 կգ - Պանրի արտադրություն

Մսի արտադրություն

210.000 կգ - Մսի արտադրություն (հորթի մարմարային միս)

/1 հորթից 350կգ կենդանի զանգված/

**Բիոզազի, օրգանական պարարտանյութի և խտացրած ու համակցված անասնակերի արտադրություն**

1 տարվա կտրվածքով

1.314.000 մ<sup>3</sup> կամ

2.628.000 կՎտ/ժամ + 3.942.000 Ջ

- Բիոզազ

22.776.000կգ /1.200 գլուխ/

- Օրգանական պարարտանյութ

9.125տ /օրական` 25 տ/

- Խտացված անասնակեր

**Ծրագրի սոցիալ-տնտեսական ազդեցությունը**

- Նոր` արդյունաբերական տիպի սերնդի, անթափոն սկզբունքով գործող գյուղատնտեսական միջճյուղային մասնագիտացված համալիրի ստեղծում, որը կնպաստի տարածաշրջանում նորարարական գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը, համայնքում գյուղատնտեսության ճյուղի ակտիվացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:
- Նորագույն տեխնոլոգիաների կիրառման արդյունքում էներգաարդյունավետ և ռեսուրսախնայող արտադրության կազմակերպում`
  - ✓ էլեկտրաէներգիայի և ջերմության այլընտանքային աղբյուրի օգտագործում;
  - ✓ ջերմոցային տնտեսությունում հիդրոպոնիկայի մեթոդի կիրառման շնորհիվ հողային, ջրային ռեսուրսների խնայում /հողի բացառում/, իսկ ջուրը օգտագործվում է բազմակի` ամեն փուլի համար կրկին հարստացվելով/;
  - ✓ սեփական անասնախոտի արտադրություն` բնական էկոհամակարգի պահպանում`
- Պետական բյուջեի հարկային եկամուտների աճ` արտադրության մեծ շրջանառության և նոր աշխատատեղեր բացելու շնորհիվ
- Վերջնական արտադրանքի ցածր ինքնարժեք պայմանավորված`
  - ✓ սեփական անթափոն օրգանական արտադրությամբ /բիոզազի արտադրություն, բիոզազով ՋԷԿ-ի շահագործում, բիոզազի թափոններից օրգանական պարարտանյութի արտադրություն` էլեկտրաէներգիայի, ջերմության, պարարտանյութի ձեռք բերման ծախսերի նվազում/

- ✓ սեփական անասնակերի արատադրությամբ /անասնակերի ձեռք բերման ծախսերի նվազում/
- ✓ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ գյուղատնտեսական մթերքի և անասնակերի բերքի կրկնակի աճի, բերքի աճի և հասունացման փուլերի տևողությունների էական կրճատմամբ:
- Անասունների օրգանիզմի կենագործունեության թափոնների՝ գոմաղբի օգտահանում առանց շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության:
- Բնակչության առողջության պահպանմանը և ամրապնդմանը նպաստող էկոլոգիապես մաքուր, բարձրակարգ որակի և արտաքին ու ներքին շուկաներում մրցունակ, միջազգային ստանդարտներին համապատասխան հայրենական գյուղատնտեսական արտադրանքի առաջարկ:

*Կատեղծվի 900 նոր աշխատատեղ:*